ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2016 թվականի N 402-Ն ք.Գյումրի

ԱՍՏՂԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 3-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը, եզրակացությունը և Աստղիկ Մարգարյանի 2016 թվականի նոյեմբերի 3-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի նոյեմբերի 4-ից դադարեցնել Աստղիկ Մարգարյանի՝ «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները և նրան նշանակել «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է